

Հ.Մ.Մ. «ԱՆԹԻԼԻԱՍ»-Ի ԱՊՐԻԼ ԱՄՍՈՒՄՆ ՉԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Շաբաթ, 11 Ապրիլ 2009-ի երեկոյան ժամը 6:00-ին, Հ.Մ.Մ. «Անթիլիաս»-ի ակումբէն ներս տեղի ունեցաւ Ս. Չատկուան տօնի եւ հակաթախաղի ձեռնարկ մը, գոր կազմակերպած էր Հ.Մ.Մ. «Անթիլիաս»-ի պատանեկան դիւանը:



Մեծ թիւով պատանիներու ներկայութեամբ կայացած այդ ձեռնարկին յայտագիրը գործադրութեան դրուելով, դիւանի անունով բարի գալուստի խօսքէն ետք տեղի ունեցան գանձազան խաղեր, որոնք հետաքրքրուիւն, խանդավառութիւն եւ



ուրախութեան մթնոլորտ մը ստեղծեցին ներկաներուն մօտ: Օրուան անակնկալն էր Չատկուան «նապաստակ»-ը, որ ակումբի սրահը մտնելով խաղցաւ ու պարեց պատանիներուն հետ: Ապա, տեղի ունեցաւ անհրաժեշտ հակաթախաղ, որուն մասնակցեցան թէ՛ պզտիկները եւ թէ՛ մեծերը, իսկ յաղթող հանդիսացաւ ակումբի անդամ կրտսերագոյն պատանին:

Հանդիսութեան ավարտին պատանիները նուէրներ ստացան եւ ապա մթնոլորտը ճոխացուցին Հ.Մ.Մ.-եան եւ հնչակեան ու հայրենասիրական խանդավառ երգերով: Ներկաները ուրախ եւ գոհ մեկնեցան ակումբէն, ամէն Կիրակի առաւօտուն հոն պատանեկան նոր յայտագիրներու մասնակցելու ցանկութեամբ:

ՖՈՒԹԳՈՒԼԻ ՄՐՅՈՒՄ

Կիրակի, 19 Ապրիլ 2009-ի առաւօտեան ժամը 9:00-ին, Հ.Մ.Մ. «Անթիլիաս»-ի ֆութպոլի Մարտիկ խումբը բարեկամական մրցում մը կատարեց Հ.Մ.Մ. «Տիրուհի» խումբին դէմ, իրաւարարութեամբ ընկ. Պենոն Սիբայէլեանի:



Հանդիպումը անցաւ կոլային բազմաթիւ առիթներով ու ֆութպոլային գեղեցիկ պահերով, եւ ավարտեցաւ 3-2 արդիւնքով, ի նպաստ Հ.Մ.Մ. Մարտիկի: Յաղթական խումբին կողմը նշանակեցին Ճիւլիան Պալմեան (2) եւ Լեւոն Բիլակեան իսկ մրցակից խումբին կողմը՝ Շահէ Կուտաշեան եւ Ճորճիկ Քիւլիլեան: Մասնաւոր Հ.Մ.Մ. «Տիրուհի»-ի կողմը դիտելէ ետք կրկնապէս ըսել, որ ունին խումբ մը խոստմալից երիտասարդներ, որոնք մօտիկ ապագային կրնան համարել Հ.Մ.Մ.-ի երեց խումբերուն շարքերը:

Յաջողութիւն՝ բոլորին:

Հ.Մ.Մ. «ԱՆԹԻԼԻԱՍ»-Ի ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

- 30 ԱՊՐԻԼ
- * 311՝ Կալեթիոս կայսրը պաշտօնապէս օրինական կը յայտարարէ քրիստոնէական կրօնը՝ հռոմէական կայսրութեան մէջ:
 - * 1789՝ ճորճ Ռուշօնի կողմէն դարձաւ Արիստոտել Նահանգներու առաջին նախագահը:
 - * 1945՝ Ատոլի Վիլիսոն եւ Էվա Պրաուն անձնասպանութիւն կը գործեն:
 - * 1975՝ Հարաւային Վիեթնամի նախագահ Տուոնկ Վան Սիւն անձնատուր կը դառնայ եւ Վիեթնամի պատերազմը կ'աւարտի:
 - * 1989՝ կը մահանայ իտալացի մեծ բեմադրիչ Մերճիո Լեոնին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՂԱՄԱՍԿՈՍ
Փերուզ Եագուպեան-Չաթալպաշեանի մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ուրբաթ, 1 Մայիս 2009-ին, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Ս.Դ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս.Դ.Հ.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեռնարկեցնել, թէ յետ այսու իր Նոր Հաճոյ եւ Անթիլիասի գրասենեակները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեռնարկական կարգավիճակը:

- Նոր Հաճոյ գրասենեակ (01-444738) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն 5:00:
- Անթիլիասի գրասենեակ (04-522345) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ս.Դ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԿԸ ԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ. ԻՆՉ ԿԸ ՎՃԱՐԵՍ, ԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՍ

Շարունակուած Բ. Էջէն

Վերջապէս, Տագնապի միջազգային խումբը կոչ կ'ուղղէ, որ Միացեալ Նահանգները, Ռուսիան եւ Եւրոպական Միութիւնը «խուսափին օրէնսդրութենէ, յայտարարութիւններէ եւ քայլերէ, որոնք կրնան բորբոքել հանրային կարծիքը երկու կողմերուն ալ պարագային, այդպիսով խանգարելով ընթացող Թուրքիա-Հայաստան յարաբերութիւններու բնականացման եւ հաշտութեան»:

Այս տեղեկագիրը լեցուն է սխալ վերլուծումներով եւ միակողմանի դատողութիւններով: Տագնապի միջազգային խումբին նման վերլուծական կեդրոններու խաղացած չարաշուք դերակատարութիւնը պետք է բացայայտուի հանրութեան լայն խանդակով եւ անոնց տեղեկագիրները անուանարկուին:

Տագնապի միջազգային խումբին կողմէ հրատարակուած փաստաթուղթը անելի շատ կը ձգէ կործանած երկրի մը դէմ գրաւող բանակին պարտադրած անձնատուութեան դաշինքի պայմաններ ըլլալու տպաւորութիւնը, քան մասնագիտական տեղեկագիր մը՝ գրուած անկողմակալ իմաստուն մարդոց կողմէ:

Յատակ է որ անոնք, որոնք վճարեցին անոր հրապարակման վարձը, տնօրինեցին անոր պարունակութիւնը:

Ս.Ա.Հ.Ա.Ե.Ս. ԸՆԿԵՐԱՅԻՆ Ծառայութեան Յանձնախումբ

ՏԱՐԵՑՆԵՐԸ ԽՆԱՍԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

Տարեցներու Հոգատարութեան Դասընթացը Պիտի սերտուին տարեցին

Կենսաբանական, հոգեբանական, հոգեւոր ներաշխարհը, ամենօրեայ կարիքները՝ գործնական ֆիզիքական խնամատարութիւն, սննդաբանութիւն, առողջապահութիւն, իրանդութիւններ, շրջապատ:

Տեղի պիտի ունենայ՝ Երկուշաբթի 11, Երեքշաբթի 12 եւ Չորեքշաբթի 13 Մայիս 2009, առաւօտեան ժամը 8:30-էն կ. ե. 2:30 Աստուածաբանական Ծեմարանին մէջ, Սուրբ Ստեփանոս փողոց, Համրա:

Խորհրդանշական մասնակցութեան սակ՝ 10,000 լիբ. ոսկի

Արձանագրութիւն եւ յայտել տեղեկութիւններ՝ Թրատ Ընկերային կեդրոնի գրասենեակ, Կուրանցի կից, Հեռ. 01-263155, ժամը 8:00-14:00, մինչեւ 6 Մայիս 2009 Երթեւեղը ապահովուած:

ՍՏԱՑԱՆԸ

ԽՆՃԱՆԿԱՊ

Կեն Դարու Հրապարակագրութեան (1967-2009)

Ստանալու համար դիմել Սիֆու Հրատարակչատուն 01-875269

ՍՏԱՑԱՆԸ

ՄԱՐԶԻՆ ՄԱՐԿԱՆԵՆ

ՔՐԵՂԱՔՐԵՆՈՒ ԿՄԵՐՈՂԱՆԸ

ԵՆԱՄԱ ՖԻՏՆԵՍՈՒՄԵՐ

ՊՕՍԹԵՐԵՆ ՊԵՏԵՐԵՐ

ԳՐԱԴՐՈՒԹ ՕՐ

15 Մայիս 2009, Երեկոյան ժամը 8:00-ին

ՀԱՅ ԱԲԵՏ. ԳՈՒԷԺԻ «ԾԻՐԱՆԻ» ԵՐԳՉԱԽՈՒԲԵԻ ՀԱՄԵՐԳ.

ՍՏԱՑԱՆԸ

ԲԱԳԻՆ

ՍՄԱՐՏ 2009

Է. Տարի թիւ 1

BOGHOS OPTIC
Autoroute Jdeidch, Tel.:01-870016

Ազգ. Ռուբինեան-Սահակ Մետրոպեան Վարժարան

ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝

Հոգաբարձութեան

Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝

ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ

Նուագի ընկերակցութեամբ հանրաժանօթ արուեստագետ

Խաչիկ Մալխասեանի

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մայիս 2009, կեսօրուան ժամը 1:00-էն սկսեալ, «Նահր Ալ ժաննա» ճաշարանին մէջ, Նահր Էլ Բէլա:

ՄԻՕՐԵԱՅ ԶԲՕՍԱՊՏՈՅՏ

ՂԷՊԻ

«ՄԱՐ ՀԱՐՊԷԼ»

Կազմակերպութեամբ՝

Salon RAZMIG-ի

ՖՅ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ «ՄԱՐ ՀԱՐՊԷԼ»-Ի ՈՒՆՏԱՎԱՅՐ

ՖՅ ՃԱՇԱՐԱՆ «ԱՆՆԱՅԱ»

ՖՅ ԱՆԱԿՆԿԱԿՆԵՐ

Կիրակի, 3 Մայիս 2009-ին

Հաւաք. Առաւօտեան ժամը 8:30-ին, Նահրի «Bank of Beirut»-ի առջեւ: Հանգիստ մակարաններու համար հեռաձայնել՝ 03 242531 թիւին.

Կ՝ՈՒԶՈՒԻ

Kodak Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսուցանող երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: kanekour@dm.net.lb

ՄԱԿԱՐԱՆ

	Գնման Սակ	Վաճառման Սակ
Սուրիական թղթոսկի	31,35	31,60
Քուէթեան տիւար	5125	5150
Յորդանանեան տիւար	2100	2125
Պահրէյնեան տիւար	3955	3980
Ա. Ս. Էմիրութեան տիրիամ	407	409
Զաթարեան ռիալ	410	412
Մեուտական ռիալ	398	400
Օմանեան ռիալ	3865	3890
Եգիպտական կիւն	270	280
Անգլիական սթերլին	2200	2210
Չուիցերիական ֆրանք	1312	1312
Թրքական լիրա	925	935
Ճափոնական եէն	15,25	15,45
Ամերիկեան տոլար	1501	1514
Գանատական տոլար	1238	1248
Աւստրալիական տոլար	1072	1082
Եւրօ	1977	1987
ՈՍԿԻ		
Մէկ օսս ոսկի	897	898
Մէկ օսս արծաթ	12,70	12,75
Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.		
Եւրօ	1,3260	1,3265
Գանատական տոլար	1,2020	1,2025
Չուիցերիական ֆրանք	1,1360	1,1365
Ճափոնական եէն	96,90	96,95
Մէկ սթերլին	1,4770	1,4750
Մէկ տոլար 372 դրամ (հայկական)		
Սակարանը տրամադրեց լուսայափոխ		
Ալեքսանեան Եղբայր		
Հեռ՝ 01-252852		

ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99

P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON

Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

جريدة يومية سياسية أرمنية تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.) المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان